

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

# ԴԱԴԱՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

*(Գանգատ թիվ 14078/12)*

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

6 սեպտեմբերի 2018թ.

*Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:*

**Դադայանն ընդդեմ Հայաստանի գործով,**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք), հանդես գալով Պալատի հետեւյալ կազմով՝

Լինոս-Ալեքսանդր Սիցիլիանոս [Linos-Alexandre Sicilianos]՝ *Նախագահ,*

Քրիստինա Պարդալոս [Kristina Pardalos],

Ալեշ Պեյխալ [Aleš Pejchal],

Քրշիշթոֆ Վոյտիչեկ [Krzysztof Wojtyczek],

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan],

Թիմ Այքը [Tim Eicke],

Յովան Իլեւսկի [Jovan Ilievski]՝ *դատավորներ*,

եւ Ռենատա Դեգեներ [Renata Degener]՝ *Բաժանմունքի քարտուղարի տեղակալ*,

2018 թվականի հուլիսի 10-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն,

կայացրեց հետեւյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի պրն Գարիկ Դադայանի (դիմումատու) կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ 2012 թվականի մարտի 5-ին Դատարան ներկայացված գանգատի (թիվ 14078/12) հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացրել է Երեւանում գործող փաստաբան պրն Կ. Սարդարյանը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը

(Կառավարություն) ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը:

3. Դիմումատուն պնդել է, մասնավորապես, որ իրեն հնարավորություն չի տրվել իր դատական քննության ժամանակ վկաներին խաչաձեւ հարցաքննելու:

4. 2016 թվականի նոյեմբերի 4-ին դիմումատուի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի մասով ներկայացված՝ իր դեմ ցուցմունք տված վկաներին հարցաքննելու անկարողության վերաբերյալ բողոքն ուղարկվել է Կառավարություն, իսկ գանգատի մնացած մասը հայտարարվել է անընդունելի՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 54-րդ կանոնի 3-րդ կետի:

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

5. Դիմումատուն ծնվել է 1954 թվականին եւ ապրում է Երեւանում:

6. 2010 թվականի մարտի 11-ին երկու անձ՝ Ս.Թ.-ն եւ Հ.Օ.-ն, Թբիլիսիում ձերբակալվել են Վրաստանի իրավապահ մարմինների կողմից, երբ փորձել են իրացնել 15 գ հարստացված ուրան, որը նրանք նույն օրը գնացքով փոխադրել էին Հայաստանից:

7. 2010 թվականի ապրիլին Հայաստանի ազգային անվտանգության ծառայությունը տեղեկատվություն է ստացել Վրաստանի իշխանություններից առ այն, որ Ս.Թ.-ն եւ Հ.Օ.-ն ռադիոակտիվ նյութը ստացել էին դիմումատուից: 2010 թվականի ապրիլի 22-ին Ազգային անվտանգության ծառայությունը դրա կապակցությամբ քրեական վարույթ է հարուցել:

8. Նույն օրը դիմումատուն ձերբակալվել է Ս.Թ.-ին եւ Հ.Օ.-ին հանցանք կատարելու մեջ օժանդակելու եւ դրդելու կասկածանքով: Ենթադրվում էր, որ

նա էր ձեռք բերել հարստացված ուրանը, որն այնուհետեւ Երեւանում վաճառել էր Հ.Օ.-ին: Ս.Թ.-ն եւ Հ.Օ.-ն այնուհետեւ ռադիոակտիվ նյութը մաքսանենգ ճանապարհով տեղափոխել էին Թբիլիսի, որտեղ էլ ձերբակալվել էին:

9. 2010 թվականի ապրիլի 23-ին դիմումատուին մեղադրանք է առաջադրվել Ս.Թ.-ին եւ Հ.Օ.-ին հանցանք կատարելու մեջ օժանդակելու եւ դրա կատարմանը դրդելու համար:

10. Դիմումատուն չի ընդունել իրեն առաջադրված մեղադրանքը: Նրա փաստարկը եղել է այն, որ Հ.Օ.-ն, ում ինքը ճանաչում էր մոտ տասը տարի, իրեն վաղուց գումար էր պարտք: 2010 թվականի փետրվարին Ուկրաինայում ինքը թալանվել էր, ինչից հետո մի կերպ հասել էր Մոսկվա աշխատանք փնտրելու, սակայն ստիպված էր եղել վերադառնալ Երեւան: Սակայն քանի որ իր գումարը գողացվել էր, ինքը որոշել էր խնդրել Հ.Օ.-ին (որպես մի մարդու, ով իրեն գումար էր պարտք) ուղարկել իրեն որոշակի գումար ճանապարհածախսի համար: Վերադառնալուց հետո ինքը մի քանի անգամ Երեւանում հանդիպել էր Հ.Օ.-ին՝ քննարկելու պարտքի մնացած մասի վճարմանն առնչվող ֆինանսական հարցերը:

11. 2010 թվականի ապրիլի 28-ին Հ.Օ.-ն որպես վկա հարցաքննվել է Վրաստանի ներքին գործերի նախարարությունում: Նա հայտնել է, որ, *inter alia* (ի թիվս այլնի), դիմումատուն տվել է իրեն 1 գ ռադիոակտիվ նյութ 2002 կամ 2003 թվականին: 2010 թվականի մարտի սկզբին ինքը եւ Ս.Թ.-ն հարցրել էին դիմումատուին, ով այդ ժամանակ գտնվում էր Ռուսաստանում, թե արդյոք նա ի վիճակի կլինի ձեռք բերել ռադիոակտիվ նյութեր: Զրույցի ընթացքում դիմումատուն հետաքրքրվել էր նման նյութի մեկ գրամի համար առաջարկված գնի մասին: Հաջորդ օրը նա զանգահարել էր Հ.Օ.-ին եւ առաջարկել պահանջվող ռադիոակտիվ նյութը բերել Հայաստան: Քանի որ դիմումատուն չուներ միջոցներ ճանապարհորդելու համար, նրանք փոխանցել էին գումարը նրան: Մի քանի օր անց դիմումատուն ժամանել էր Հայաստան եւ տվել ռադիոակտիվ նյութը Հ.Օ.-ին: Նրանք պայմանավորվել էին, որ Հ.Օ.-ն կվճարի դիմումատուին գործարքից հետո:

Այն հարցին, թե արդյոք նա որեւէ գումար էր պարտք դիմումատուին, Հ.Օ.-ն հերքել է նրանից երբեւիցե պարտք վերցնելը:

12. 2010 թվականի ապրիլի 29-ին Ս.Թ.-ն նույնպես որպես վկա հարցաքննվել է Վրաստանի ներքին գործերի նախարարությունում: Նա հայտնել է, *inter alia*, որ երբ գտնվում էր Վրաստանում, որոշ մարդիկ առաջարկել էին իրենից գնել ուրան: Ինքն այնուհետեւ գնացել է Հայաստան եւ խնդրել Հ.Օ.-ին գտնել դիմումատուին, որպեսզի վերջինս նրանց կարողանա ուրան տրամադրել: Ս.Թ.-ն նաեւ նշել է, որ Հ.Օ.-ն կապի մեջ է եղել դիմումատուի հետ, ով համաձայնել էր գալ Հայաստան նրան ուրան տալու համար: Այնուհետեւ նրանք բանկային փոխանցմամբ դիմումատուին ճանապարհածախսի գումար են ուղարկել: Հետո ինքը հանդիպել է Հ.Օ.-ին երկաթուղային կայարանում: Հ.Օ.-ն ռադիոակտիվ նյութը հետ է բերել Վրաստան եւ հայտնել, որ այն վերցրել է դիմումատուից:

13. 2010 թվականի դեկտեմբերի 8-ին ներկայացվել է վերջնական մեղադրական եզրակացությունը, եւ գործը դատական քննության համար փոխանցվել է Տավուշի մարզային դատարան: Մեղադրական եզրակացությունը հիմնվել է հետեւյալ ապացույցների վրա՝ Ս.Թ.-ի եւ Հ.Օ.-ի կողմից Վրաստանում տրված ցուցմունքներ, այլ ցուցմունքներ՝ մասնավորապես տրված Ք.Օ.-ի Վ.Գ.-ի կողմից Հայաստանում, Վրաստանում կատարված դատաբժշկական փորձաքննության եզրակացություն՝ համաձայն որի Ս.Թ.-ից առգրավված նյութը պարունակել է հարստացված ուրան, 2009 թվականի սեպտեմբերի 1-ից 2010 թվականի մարտի 30-ն ընկած ժամանակահատվածում դիմումատուի եւ Հ.Օ.-ի միջեւ կանոնավոր հեռախոսային խոսակցությունները եւ, մասնավորապես, 2010 թվականի մարտի 10-ին կատարված երկու հեռախոսազանգերը, ինչպես նաեւ դիմումատուի անձնագրում համապատասխան ելքի եւ մուտքի դրոշմակնիքները, որոնք ապացուցում են, որ նա Մոսկվայից ժամանել է Երեւան 2010 թվականի մարտի 10-ին:

14. Մարզային դատարանում կայացած նիստերից մեկի ընթացքում, հիմնվելով, *inter alia*, Ստրասբուրգի՝ «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» 1959 թվականի կոնվենցիայի վրա, դիմումատուն միջնորդություն է ներկայացրել Վրաստանի բանտից Ս.Թ.-ին եւ Հ.Օ.-ին ժամանակավոր փոխադրելու մասին, որպեսզի հնարավոր լիներ նրանց հարցաքննել դատական քննության ընթացքում:

15. Նրա միջնորդությունը բավարարվել է: Այսպես, 2011 թվականի հունվարի 27-ին նախագահող դատավորը որոշում է կայացրել Ս.Թ.-ին եւ Հ.Օ.-ին ժամանակավոր Հայաստան փոխադրելու մասին:

16. 2011 թվականի ապրիլի 29-ի գրությամբ Վրաստանի արդարադատության նախարարությունը մերժել է խնդրանքը բավարարելը՝ հղում կատարելով Ստրասբուրգի կոնվենցիայի 11-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետին, որի համաձայն փոխադարձ օգնության մասին խնդրանքը կարող է մերժվել, եթե «նրա ներկայությունն անհրաժեշտ է Հայցվող կողմի տարածքում քրեական վարույթ իրականացնելու համար»: Արդարադատության նախարարությունն ավելացրել է, որ Ս.Թ.-ն եւ Հ.Օ.-ն դատապարտվել են Թբիլիսիի վերաքննիչ դատարանի՝ 2011 թվականի մարտի 30-ի վճռով, սակայն վճիռը դեռեւս ենթակա էր բողոքարկման:

17. 2011 թվականի մայիսի 6-ին դիմումատուի ներկայացուցիչը Մարզային դատարանին իր համաձայնությունն է տվել շարունակելու գործի քննությունը նույնիսկ այն պարագայում, երբ Ս.Թ.-ին եւ Հ.Օ.-ին հնարավոր չլինի փոխադրել Հայաստան, քանի որ դիմումատուն հիվանդ էր: Այնուամենայնիվ, նա խնդրել է դատարանին իր վճռում որպես հիմք չընդունել չներկայացած վկաների կողմից Վրաստանում տրված ցուցմունքները:

18. Նախագահող դատավորը 2011 թվականի մայիսի 24-ի նիստին տեղեկացրել է կողմերին Վրաստանի արդարադատության նախարարության կողմից ստացված պատասխանի մասին:

19. Նույն նիստին դիմումատուն խնդրել է որպես վկա կանչել Ս. Գ.-ին՝ գնացքի՝ քննության ընթացքում հարցաքննված վագոնավարին, այն հիմքով, որ նրա կողմից տրված որոշ ցուցմունքներ հակասում էին Ս. Թ.-ի եւ Հ. Օ.-ի հայտարարություններին: Առաջին ատյանի դատարանը մերժել է այդ միջնորդությունը՝ համարելով այն չհիմնավորված:

20. 2011 թվականի մայիսի 25-ին Մարզային դատարանը դիմումատուին մեղավոր է ճանաչել եւ նրան դատապարտել յոթ տարի ժամկետով ազատազրկման եւ որոշում ընդունել նրա գույքը բռնագրավելու մասին: Այդպիսով, Մարզային դատարանը որպես հիմք է ընդունել Վրաստանում իրականացված հարցաքննության ընթացքում Ս. Թ.-ի եւ Հ. Օ.-ի տված ցուցմունքները, Վ. Դ.-ի եւ Ք. Օ.-ի՝ համապատասխանաբար դիմումատուի ընկերոջ եւ Հ. Օ.-ի դստեր ցուցմունքները, Վրաստանում եւ Հայաստանում կատարված դատաբժշկական փորձաքննության արդյունքները, որոնք հաստատում են, որ հայտնաբերված նյութը պարունակել է հարստացված ուրան, դիմումատուի եւ Հ.Օ.-ի միջեւ կանոնավոր հեռախոսային խոսակցությունները եւ դիմումատուի անձնագրում համապատասխան ելքի եւ մուտքի դրոշմակնիքները, որոնք ապացուցում են, որ նա Մոսկվայից ժամանել է Երեւան 2010 թվականի մարտի 10-ին:

21. Դիմումատուն ներկայացրել է վերաքննիչ բողոք՝ բողոքելով, *inter alia,* դատական քննության ժամանակ Ս. Թ.-ին եւ Հ. Օ.-ին խաչաձեւ հարցաքննելու հնարավորության բացակայության եւ առաջին ատյանի դատարանի կողմից Ս. Գ.-ին կանչելու մերժման մասով:

22. 2011 թվականի հուլիսի 13-ին Վերաքննիչ քրեական դատարանն անփոփոխ է թողել դիմումատուի մեղադրական դատավճիռը: Որոշմամբ անդրադարձ չի կատարվել վկա Ս. Գ.-ին քննելու մերժմանն ու այն փաստի վերաբերյալ դիմումատուի փաստարկներին, որ Ս. Թ.-ն եւ Հ. Օ.-ն չէին կարող հարցաքննվել:

23. Դիմումատուն ներկայացրել է վճռաբեկ բողոք՝ բերելով նախորդ վերաքննիչ բողոքում նշված փաստարկներին համանման փաստարկներ:

24. 2011 թվականի սեպտեմբերի 17-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը հիմքերի բացակայության պատճառով անընդունելի է ճանաչել դիմումատուի վճռաբեկ բողոքը:

## II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

**Քրեական դատավարության օրենսգիրք**

25. 86-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերի համաձայն՝ վկան պարտավոր է ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով: Վկայի կողմից իր պարտականությունները չկատարելն առաջ է բերում օրենքով նախատեսված պատասխանատվություն:

26. Համաձայն օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի՝ վկան կարող է բերման ենթարկվել դատարանի պատճառաբանված որոշման հիման վրա եւ պարտավոր է նշանակված ժամկետում կանչով ներկայանալուն խոչընդոտող հարգելի պատճառների առկայության մասին տեղյակ պահել իրեն կանչած մարմնին:

27. Օրենսգրքի 332-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ դատական քննությանը հրավիրված վկաներից որեւէ մեկի չներկայանալու դեպքում դատարանը, լսելով կողմերի կարծիքը, որոշում է կայացնում գործի քննությունը շարունակելու կամ հետաձգելու մասին: Դատական քննությունը կարող է շարունակվել, եթե նշված անձանցից որեւէ մեկի չներկայանալը չի խոչընդոտի գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ հետազոտմանը:

28. Օրենսգրքի 342-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հետաքննության, նախաքննության կամ նախորդ դատական քննության ընթացքում վկայի տված ցուցմունքների հրապարակումը դատական քննության ժամանակ թույլատրվում է, երբ վկան դատական նիստից բացակայում է այնպիսի պատճառներով, որոնք բացառում են նրա դատարան ներկայանալու հնարավորությունը, էական հակասություններ կան այդ ցուցմունքների եւ դատարանում վկայի տված ցուցմունքների միջեւ, ինչպես նաեւ սույն օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում:

## III. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

29. Հայաստանի եւ Վրաստանի միջեւ քրեական գործերով փոխադարձ օգնությունը կարգավորվում է, մասնավորապես, «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» 1959 թվականի ապրիլի 20-ի եվրոպական կոնվենցիայով, որը, որքանով վերաբերելի է, շարադրված է հետեւյալ կերպ.

**Հոդված 3, կետ 2**

«Եթե Հայցող կողմը ցանկանում է, որ վկաները կամ փորձագետները վկայություն տան երդումով, ապա նա հստակորեն պետք է արտահայտի այդպիսի խնդրանքը, եւ Հայցվող կողմը կկատարի այդ խնդրանքը, եթե դա արգելված չէ իր պետության օրենսդրությամբ:

...»

**Հոդված 11**

«1. Կալանքի տակ գտնվող անձը, որի անձնական ներկայության համար Հայցող կողմը դիմել է, որպես վկա կամ առերեսման համար կարող է ժամանակավորապես փոխանցվել այն տարածք, որտեղ տեղի է ունենալու դատաքննությունը՝ պայմանով, որ նա կվերադարձվի Հայցվող կողմի նշած ժամանակահատվածում եւ 12-րդ հոդվածի դրույթներին համապատասխան՝ այնքանով, որքանով դրանք կիրառելի են:

Փոխանցումը կարող է մերժվել, եթե.

ա) կալանքի տակ գտնվող անձը դրան համաձայն չէ,

բ) նրա ներկայությունն անհրաժեշտ է Հայցվող կողմի տարածքում քրեական վարույթ իրականացնելու համար,

գ) փոխանցումը կերկարաձգի նրա կալանքի տակ գտնվելը, կամ

դ) առկա են Հայցող կողմի տարածք նրա փոխանցումը չթույլատրող այլ հիմքեր:

...

3. Փոխանցված անձը Հայցող կողմի տարածքում եւ այն Կողմի տարածքում, որից պահանջվում է տարանցում, մնում է կալանքի տակ, մինչեւ որ Հայցվող կողմը դիմում է նրան ազատ արձակելու համար»:

## ԻՐԱՎՈՒՆՔԸ

### I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՎ 3-ՐԴ ԿԵՏԻ «Դ» ԵՆԹԱԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

30. Դիմումատուն բողոք է ներկայացրել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի եւ 3-րդ կետի «դ» ենթակետի մասով առ այն, որ նրան հնարավորություն չի տրվել իր դատական քննության ժամանակ խաչաձեւ հարցաքննելու Ս.Թ.-ին եւ Հ.Օ.-ին: Նույն դրույթների հիման վրա՝ նա նաեւ բողոքել է դատարանի կողմից վկա Ս.Գ.-ին քննելը մերժելու վերաբերյալ:

31. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի եւ 3-րդ կետի «դ» ենթակետի համապատասխան մասերն ունեն հետեւյալ բովանդակությունը.

«1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են ... իրեն ներկայացված քրեական մեղադրանքի հիմնավորվածությունը, ունի ... անկախ եւ անաչառ տրիբունալի կողմից ... արդարացի ... լսումների իրավունք...

...

3. Քրեական իրավախախտում կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետեւյալ նվազագույն իրավունքները.

...

դ) հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, եւ իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու եւ հարցաքննելու միեւնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները,

...»

## Ա. Ընդունելիությունը

32. Դատարանը նշում է, որ այս գանգատը, Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով, ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետեւ նշում է, որ այն անընդունելի չէ որեւէ այլ հիմքով: Հետեւաբար, այն պետք է հայտարարվի ընդունելի:

## Բ. Ըստ էության քննությունը

### *1. Կողմերի փաստարկները*

### ա) Դիմումատուն

33. Դիմումատուն պնդել է, որ Մարզային դատարանը դատարանում հրապարակել է վկաներ Ս. Թ.-ի եւ Հ. Օ.-ի գրավոր ցուցմունքները՝ նախքան Վրաստանի իշխանություններից վկաներին Հայաստան փոխադրելը մերժելու մասին պատասխան ստանալը: Նույնիսկ պատասխանն ստանալուց հետո դատարանը որեւէ ջանք չի գործադրել պարզելու համար՝ արդյոք վկաների փոխադրումը կարող էր իրականացվել ավելի ուշ փուլում: 2011 թվականի մայիսի 6-ի իր միջնորդությամբ դիմումատուն չի հրաժարվել խաչաձեւ հարցաքննելու իր

իրավունքից, այլ խնդրել է դատարանին իր վճռում որպես հիմք չընդունել չներկայացած վկաների գրավոր ցուցմունքները:

34. «Միակ եւ վճռորոշ» չափանիշի առնչությամբ դիմումատուն նշել է, որ ներպետական վճիռներում Ս. Թ.-ի եւ Հ. Օ.-ի ցուցմունքները նշվել են որպես իր մեղքը հիմնավորող ապացույց՝ առանց որեւէ գնահատման: Դա միակ ապացույցն է եղել, որը հաստատել է, որ նրանց հարստացված ուրան վաճառողը նա է եղել, ուստի այդ ապացույցը եղել է միակ եւ վճռորոշ ապացույցը: Մյուս ապացույցները եղել են պարզապես անուղղակի ապացույցներ: Ընդ որում, Մարզային դատարանը զգուշավորություն չի դրսեւորել այս ապացույցի առնչությամբ: Քննության փուլում դիմումատուին որեւէ հնարավորություն չի տրվել հարցաքննելու վկաներ Ս. Թ.-ին եւ Հ. Օ.-ին:

35. Ինչ վերաբերում է Ս. Գ.-ին լսելը մերժելուն, ապա դիմումատուն խնդրել էր, որ այդ վկային լսեն՝ նրա կողմից տրված նախաքննական ցուցմունքների եւ չներկայացած վկաների ցուցմունքների միջեւ առկա հակասությունների պատճառով: Նրան չլսելը ոչ միայն հանգեցրել է դիմումատուի՝ 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետով նախատեսված իրավունքի խախտմանը, այլ նաեւ եղել է անբավարար հակակշռող միջոց՝ համաձայն *Ալ-Քավայայի* (տե՛ս *Ալ-Քավայան եւ Թահերին ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄՊ] [*Al-Khawaja and Tahery v. the United Kingdom* [GC]], թիվ 26766/05 եւ թիվ 22228/06, ՄԻԵԴ 2011) չափանիշի:

**բ) Կառավարությունը**

36. Կառավարությունը պնդել է, որ բոլոր անհրաժեշտ եւ նպատակահարմար քայլերը ձեռնարկվել են՝ ապահովելու համար վկաներ Ս. Թ.-ի եւ Հ. Օ.-ի ներկայությունը, սակայն նրանց փոխադրումը Վրաստանից մերժվել է Վրաստանի իշխանությունների կողմից: Նաեւ հնարավոր չի եղել հարցաքննություն իրականացնել տեսակապի միջոցով, քանի որ

համապատասխան մարմինները պատշաճ սարքավորումներ չեն ունեցել: Ուստի վկաների ցուցմունքները որպես ապացույց ճանաչելու համար եղել է հիմնավոր պատճառ: Ընդ որում, 2011 թվականի մայիսի 6-ին դիմումատուի ներկայացուցիչը իր համաձայնությունն է տվել դատարանին շարունակելու դատական քննությունը, ինչը համարվում է Ս. Թ.-ին եւ Հ. Օ.-ին խաչաձեւ հարցաքննելու իրավունքից հրաժարում:

37. Կառավարությունը պնդել է, որ Ս. Թ.-ի եւ Հ. Օ.-ի ցուցմունքները միակ ապացույցը չեն եղել ընդդեմ դիմումատուի, եւ դրանք ոչ էլ կարող էին համարվել վճռորոշ: Մարզային դատարանը որպես հիմք է ընդունել դիմումատուի դատապարտման համար հիմք ծառայող այլ ապացույցներ: Նաեւ առկա են եղել բավարար հակակշռող գործոններ՝ դիմումատուին որեւէ թերության համար փոխհատուցելու համար: Դիմումատուն հնարավորություն է ունեցել վիճարկելու չներկայացած վկաների կողմից տրված ցուցմունքների ընդունելիությունը, սակայն չի արել դա: Ներպետական դատարանները նույնպես փոխհատուցել են դիմումատուի՝ չներկայացած վկաներին հարցաքննելու անկարողության համար՝ քննադատական գնահատականի ենթարկելով նրանց ցուցմունքների հավաստիությունը: Չներկայացած վկաների եւ մյուս վկաների ցուցմունքները խիստ նման են եղել:

38. Ինչ վերաբերում է Ս. Գ.-ին լսելը մերժելուն, ապա Կառավարությունը նշել է, որ ազգային դատարաններն են գնահատում վկային կանչելու նպատակահարմարությունը: Մարզային դատարանը մերժել է Ս. Գ.-ին լսելու մասին միջնորդությունը, քանի որ նա իր նախաքննական ցուցմունքում չի տրամադրել որեւէ տեղեկատվություն, որը կարող էր ենթադրաբար էական նշանակություն ունենալ գործի համար: Ոչ էլ դիմումատուի դատապարտման հիմքում եղել է այդ ցուցմունքը:

*2. Դատարանի գնահատականը*

**ա) Ընդհանուր սկզբունքները**

39. Դատարանը կրկին նշում է, որ 6-րդ հոդվածի կիրառությունը կարգավորող հիմնական սկզբունքը արդարացիությունն է: Արդար դատաքննության իրավունքը ժողովրդավարական հասարակությունում այնքան կարեւոր տեղ է զբաղեցնում, որ 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված երաշխիքները նեղ իմաստով մեկնաբանելը որեւէ կերպ չի կարող արդարացվել (տե՛ս *Մորեյրա դե Ազեվեդոն ընդդեմ Պորտուգալիայի* [*Moreira de Azevedo v. Portugal*], 1990 թվականի հոկտեմբերի 23, § 66, շարք Ա թիվ 189, *Գրեգաչեվիչն ընդդեմ Խորվաթիայի* [*Gregačević v. Croatia*], թիվ 58331/09, § 49, 2012 թվականի հուլիսի 10):

40. Դատարանն այնուհետեւ կրկին նշում է, որ որպես ընդհանուր կանոն, 6-րդ հոդվածի 1-ին կետով եւ 3-րդ կետի «դ» ենթակետով պահանջվում է, որ մեղադրյալին համարժեք եւ պատշաճ հնարավորություն տրվի վկայի կողմից իր դեմ տված ցուցմունքը վիճարկելու եւ նրան հարցաքննելու՝ վկայի կողմից ցուցմունք տալու ժամանակ կամ հետագա փուլերում (տե՛ս *Ալ-Քավայայի եւ Թահերիի* գործը՝ վերեւում հիշատակված, § 118, եւ *Պոլետանը եւ Ազիրովիկն ընդդեմ Մակեդոնիայի նախկին Հարավսլավական Հանրապետության* [*Poletan and Azirovik v. the former Yugoslav Republic of Macedonia*], թիվ 26711/07, 32786/10 եւ 34278/10, § 81, 2016 թվականի մայիսի 12):

41. *Ալ-Քավայայի եւ Թահերիի* (վերեւում հիշատակված, §§ 119-147) գործում Մեծ պալատը հստակեցրել է այն սկզբունքները, որոնք պետք է կիրառվեն այն դեպքում, երբ վկան դռնբաց դատական քննությանը չի ներկայանում: Այդ սկզբունքները կարող են ամփոփ ներկայացվել հետեւյալ կերպ.

i) Դատարանը նախ պետք է քննի այն նախնական հարցը, թե արդյոք հիմնավոր պատճառ կա չներկայացած վկայի տված ցուցմունքը որպես ապացույց ճանաչելու համար՝ հաշվի առնելով, որ վկաները պետք է, որպես ընդհանուր կանոն, ցուցմունք տան դատական քննության ժամանակ, եւ որ պետք է ձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ նրանց ներկայանալն ապահովելու համար.

ii) չներկայանալու ամենահաճախ հանդիպող պատճառներն են, օրինակ, ինչպես *Ալ-Քավայայի եւ Թահերիի գործում* (վերեւում հիշատակված), վկայի մահը կամ վախը վրեժխնդրությունից: Սակայն գոյություն ունեն վկայի՝ դատական քննությանը չներկայանալու այլ իրավաչափ պատճառներ.

iii) այն դեպքում, երբ վկան չի հարցաքննվել վարույթի ավելի վաղ փուլում, դատական քննությանը տեղում տրվող ցուցմունքի փոխարեն վկայի ցուցմունքի ընդունումը թույլատրելը պետք է լինի ծայրահեղ միջոց.

iv) չներկայացած վկաների՝ նախկինում տված ցուցմունքը որպես ապացույց ճանաչելը հնարավոր անբարենպաստ պայմաններ է ստեղծում մեղադրյալի համար, ով, ըստ էության, քրեական դատավարության ժամանակ պետք է ունենա իր դեմ ներկայացված ապացույցները վիճարկելու արդյունավետ հնարավորություն: Մասնավորապես, նա պետք է կարողանա ստուգել վկաների կողմից տրված ցուցմունքների ճշմարտացիությունը եւ հավաստիությունը՝ դրանք վկայի ներկայությամբ բանավոր քննելու միջոցով՝ վկայի կողմից ցուցմունք տալու ժամանակ կամ վարույթի հետագա որեւէ փուլում.

v) «միակ կամ վճռորոշ ցուցմունքի սկզբունքի» համաձայն՝ այն դեպքում, երբ մեղադրյալը դատապարտվում է բացառապես կամ հիմնականում այն վկաների տված ցուցմունքների հիման վրա, որոնց մեղադրյալը չի կարող հարցաքննել վարույթի փուլերից որեւէ մեկում, նրա պաշտպանության իրավունքներն անհիմն կերպով սահմանափակվում են.

vi) այս համատեքստում «վճռորոշ» բառը պետք է նեղ իմաստով հասկացվի որպես այնպիսի նշանակության կամ կարեւորության ցուցմունք, որը կարող է որոշել գործի ելքը: Եթե վկայի չստուգված ցուցմունքը հիմնավորվում է այլ հիմնավորված ապացույցներով, ապա դրա վճռորոշության վերաբերյալ գնահատականը կախված կլինի հաստատող ապացույցների ծանրակշիռ լինելուց. որքան հավաստի են մեղավորությունը հաստատող մյուս ապացույցները, այնքան քիչ հավանական է, որ չներկայացած վկայի ցուցմունքը կհամարվի վճռորոշ.

vii) այնուամենայնիվ, քանի որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետը պետք է մեկնաբանվի վարույթի արդարացիության ընդհանուր ուսումնասիրության համատեքստում, միակ կամ վճռորոշ ցուցմունքի սկզբունքը չպետք է կիրառվի ոչ ճկուն եղանակով.

viii) մասնավորապես, եթե ուրիշի խոսքի վրա հիմնված ցուցմունքը միակ կամ վճռորոշ ապացույցն է մեղադրյալի դեմ, ապա այն որպես ապացույց ճանաչելն ինքնըստինքյան չի հանգեցնի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտմանը: Միեւնույն ժամանակ, եթե դատապարտման համար միակ կամ վճռորոշ հիմք են չներկայացած վկաների ցուցմունքները, ապա Դատարանը պետք է դատական քննությունն իրականացնի առավել հանգամանորեն: Պայմանավորված այն վտանգներով, որոնք կարող են առաջանալ այդ ցուցմունքները որպես ապացույց ճանաչելու հետեւանքով՝ այն կհանդիսանա շատ կարեւոր գործոն հավասարակշռության համար եւ կպահանջի հակակշռող բավարար գործոններ, այդ թվում՝ հուսալի դատավարական երաշխիքներ: Յուրաքանչյուր դեպքում հարցն այն է, թե արդյոք առկա են բավարար հակակշռող գործոններ, այդ թվում՝ միջոցներ, որոնք թույլ կտան արդարացի եւ պատշաճ կերպով գնահատել այդ ցուցմունքների հավաստիությունը՝ դրանք որպես ապացույց ճանաչելու համար: Սա թույլ կտա, որ անձին դատապարտելը հիմնված լինի նման ցուցմունքների վրա միայն այն դեպքում, երբ դրանք լինեն բավականաչափ հավաստի՝ հաշվի առնելով գործի համար դրանց կարեւորությունը:

42. Այս սկզբունքները մանրամասնորեն պարզաբանվել են *Շաչաշվիլիի* գործում (տե՛ս *Շաչաշվիլին ընդդեմ Գերմանիայի* [ՄՊ] [*Schatschaschwili v. Germany* [GC]], թիվ 9154/10, §§ 111-131, ՄԻԵԴ 2015), որում Մեծ պալատը հաստատել է, որ վկայի չներկայանալու համար հիմնավոր պատճառի բացակայությունը չի կարող ինքնին վկայել դատաքննության անարդարացի չլինելու մասին, թեեւ ընդհանուր արդարացիությունը գնահատելիս այն ամեն դեպքում կարեւոր գործոն է հավասարակշռությունը որոշելու համար եւ կարող է որոշիչ դեր ունենալ 6-րդ հոդվածի 1-ին կետի եւ 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում արձանագրելու հարցում: Ավելին, հաշվի առնելով, որ Դատարանի խնդիրն էր պարզել՝ արդյոք դատական քննությունն ընդհանուր առմամբ արդարացի է եղել, այն պետք է բավարար հակակշռող գործոնների առկայությունն ուսումնասիրի ոչ միայն այն գործերում, որոնց դեպքում չներկայացած վկայի ցուցմունքը միակ կամ վճռորոշ հիմքն է եղել դիմումատուին դատապարտելու համար, այլ նաեւ այն գործերում, որոնց դեպքում այն չի կարողացել հստակ պարզել՝ արդյոք տվյալ ցուցմունքը միակն ու վճռորոշն է եղել, սակայն, այնուհանդերձ, համոզվել է, որ այդ ցուցմունքը կարեւոր նշանակություն է ունեցել, եւ այն որպես ապացույց ճանաչելը, հնարավոր է, սահմանափակել է պաշտպանության կողմի հնարավորությունները: Հակակշռող գործոնների՝ դատաքննությունն արդար համարելու համար անհրաժեշտ շրջանակը կախված է չներկայացած վկայի ցուցմունքի նշանակությունից: Որքան կարեւոր լինի այդ ցուցմունքը, այնքան ավելի կարեւոր նշանակություն պետք է ունենան հակակշռող գործոնները, որպեսզի դատաքննությունն ընդհանուր առմամբ համարվի արդարացի (տե՛ս *Սեթոնն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Seton v. the United Kingdom*], թիվ 55287/10, §§ 58 եւ 59, 2016 թվականի մարտի 31):

43. Քանի որ 6-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները պետք է դիտարկվեն որպես 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքի հատուկ ասպեկտներ, Դատարանն այս դեպքում 6-րդ հոդվածի 1-ին կետի եւ 3-րդ կետի «դ» ենթակետի մասով ներկայացված բողոքները կքննի

համատեղ (տե՛ս, *mutatis mutandis (համապատասխան փոփոխություններով)*, *Վան Մեխելենը եւ այլք ընդդեմ Նիդեռլանդների* [*Van Mechelen and Others v. the Netherlands*], 1997 թվականի ապրիլի 23, § 49, *Վճիռների եւ որոշումների մասին զեկույցներ* 1997-III, եւ *Գրեգաչեվիչի* գործը՝ վերեւում հիշատակված, § 52):

**բ) Այդ սկզբունքների կիրառումը սույն գործի նկատմամբ**

44. Դատարանը նշել է, որ Մարզային դատարանը դիմումատուին մեղավոր է ճանաչել Ս.Թ.-ին եւ Հ.Օ.-ին հանցանք կատարելու մեջ օժանդակելու եւ դրդելու համար եւ դատապարտել նրան յոթ տարի ժամկետով ազատազրկման: Նախաքննության ընթացքում Ս.Թ.-ն եւ Հ.Օ.-ն հարցաքննվել են որպես վկաներ: Դիմումատուն խնդրել է, որ նրանք կանչվեն եւ ներկայանան առաջին ատյանի դատարան հարցաքննության համար, սակայն նրանց փոխադրումը Հայաստան մերժվել է Վրաստանի իշխանությունների կողմից: Առաջին ատյանի դատարանը նաեւ մերժել է դիմումատուի անունից որպես վկա Ս.Գ.-ին կանչելը:

45. Ս.Գ.-ին որպես պաշտպանության կողմի վկա չկանչելու մասով Դատարանը նշում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով մեղադրյալին չի տրամադրվում վկաների ներկայությունը դատարանում երաշխավորելու անսահմանափակ իրավունք: Սովորաբար ազգային դատարաններն են որոշում՝ արդյոք անհրաժեշտ կամ նախընտրելի է հարցաքննել վկային (տե՛ս *Ս.Ն.-ն ընդդեմ Շվեդիայի* [*S.N. v. Sweden* ], թիվ 34209/96, § 44, ՄԻԵԴ 2002-V, եւ *Ակկարդին եւ այլք ընդդեմ Իտալիայի* (որոշում) [*Accardi and Others v. Italy* (dec.)], թիվ 30598/02, 2005 թվականի հունվարի 20): Ընդ որում, բավարար չէ, որ մեղադրյալը բողոքի այն մասին, որ իրեն չի թույլատրվել հարցաքննել որոշակի վկաների. նա պետք է ի լրումն հիմնավորի իր խնդրանքը՝ բացատրելով, թե ինչու է կարեւոր համապատասխան վկաների լսված լինելը, իսկ նրանց ցուցմունքները պետք է անհրաժեշտ լինեն ճշմարտության հաստատման համար (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Պերնան ընդդեմ Իտալիայի* (ՄՊ) [*Perna v. Italy* [GC]], թիվ

48898/99, § 29, ՄԻԵԴ 2003-V): Սույն գործում դիմումատուն պնդել է, որ Ս.Գ.-ի ցուցմունքը հակասում է Ս.Թ.-ի եւ Հ.Օ.-ի ցուցմունքներին: Այնուամենայնիվ, առաջին ատյանի դատարանը եւ Վերաքննիչ քրեական դատարանը մերժել են լսել Ս.Գ.-ին (տե՛ս վերեւում 19-րդ եւ 22-րդ պարբերությունները)՝ առանց դրա վերաբերյալ որեւէ կոնկրետ պատճառ ներկայացնելու: Ըստ այդմ, Դատարանի կարծիքով, այս տարրը պետք է հաշվի առնվի գնահատելիս, թե արդյոք վարույթն ընդհանուր առմամբ եղել է արդար (նույն տեղում):

46. Անդրադառնալով չներկայացած վկաներ Ս.Թ.-ի եւ Հ.Օ.-ի գրավոր ցուցմունքներին՝ Դատարանը բազմաթիվ անգամ նշել է, որ արդար դատաքննության պահանջներից մեկն այն է, որ մեղադրյալին տրվի այն դատավորի ներկայությամբ վկայի՝ իր դեմ տված ցուցմունքի թույլատրելիությունը վիճարկելու կամ իր դեմ ցուցմունք տված վկային հարցաքննելու հնարավորություն, որը վերջնական որոշում է կայացնելու գործի վերաբերյալ, քանի որ դատավորի դիտարկումները տվյալ վկայի վարքագծի վերաբերյալ եւ այն մասին, թե որքանով կարելի է վստահել նրան, կարող են հետեւանքներ ունենալ մեղադրյալի համար (տե՛ս *Հանուն ընդդեմ Ռումինիայի* [*Hanu v. Romania*], թիվ 10890/04, § 40, 2013 թվականի հունիսի 4, հաջորդող հղումների հետ միասին):

*i) Արդյոք վկաների չներկայանալու համար եղել են հիմնավոր պատճառներ*

47. Դատարանը կրկին նշում է, որ առաջին ատյանի դատարանի տեսանկյունից վկայի չներկայանալու համար պետք է լինի հիմնավոր պատճառ, այսինքն՝ դատարանը պետք է ունենա լավ փաստական եւ իրավական հիմնավորումներ դատական քննության ժամանակ վկայի ներկայությունը երաշխավորել չկարողանալու համար: Եթե այդ իմաստով վկայի չներկայանալու համար կա հիմնավոր պատճառ, դրանից հետեւում է, որ առաջին ատյանի դատարանն ունի հիմնավոր պատճառ կամ հիմնավորում որպես ապացույց

ճանաչել չներկայացած վկայի չստուգված ցուցմունքը (տե՛ս *Շաչաշվիլիի* գործը՝ վերեւում հիշատակված, §119): Վկան կարող է դատական քննությանը չներկայանալ մի շարք պատճառներով (տե՛ս *Ալ-Քավայայի եւ Թահերիի* գործը՝ վերեւում հիշատակված, §120-125), ներառյալ՝ այն իրավիճակները, երբ վկային հնարավոր չէ հայտնաբերել (տե՛ս *Յեբերն ընդդեմ Չեխիայի Հանրապետության* [*Tseber v. the Czech Republic*], թիվ 46203/08, § 48, 2012 թվականի նոյեմբերի 22 եւ *Պաիչն ընդդեմ Խորվաթիայի* [*Paić v. Croatia*], թիվ 47082/12, § 34, 2016 թվականի մարտի 29):

48. Ս.Թ.-ի եւ Հ.Օ.-ի՝ դատական քննությանը չներկայանալու պատճառը Վրաստանի արդարադատության նախարարության կողմից նրանց փոխադրումը մերժելն էր այն պատճառով, որ այդ ժամանակ նրանց մեղադրական դատավճիռները դեռեւս ենթակա էին վճռաբեկ կարգով բողոքարկման (տե՛ս վերեւում 16-րդ պարբերությունը): Այդուհանդերձ, Դատարանն ուշագրավ է համարում այն փաստը, որ այդ տեղեկատվությունն ստանալուց հետո առաջին ատյանի դատարանը չի ձեռնարկել որեւէ այլ փորձ, օրինակ, պարզելու համար, թե արդյոք Ս.Թ.-ի եւ Հ.Օ.-ի մեղադրական դատավճիռները կդառնան վերջնական, եւ, եթե այո, ապա երբ եւ արդյոք նրանք կարող են, համաձայն Ստրասբուրգի՝ «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» 1959 թվականի կոնվենցիայի (տե՛ս վերեւում 29-րդ պարբերությունը), ավելի ուշ փուլում փոխադրվել Հայաստան՝ դատական քննության համար: Ըստ երեւույթին, նաեւ չեն դիտարկվել դիմումատուին՝ վկաներին հարցաքննելու հնարավորություն տալու այլ միջոցներ, օրինակ՝ Վրաստանում նրանցից բանավոր ցուցմունք վերցնելը կամ տեսակապը: Վերջին նշվածի առնչությամբ Դատարանը նշում է, որ Կառավարությունը պնդել է, որ սա հնարավոր չի եղել, քանի որ համապատասխան մարմինները պատշաճ սարքավորումներ չեն ունեցել (տե՛ս վերեւում 36-րդ պարբերությունը): Սակայն հաշվի առնելով կողմերի կողմից ներկայացված փաստերը՝ տպավորություն չի ստեղծվում, որ առաջին ատյանի

դատարանը երբեւէ դիտարկել է այդ միջոցի կիրառումը (տե՛ս վերեւում 14-20-րդ պարբերությունները):

49. Նույնիսկ ենթադրելով, որ նիստին այս անձանց չհարցաքննելու հիմնավոր պատճառ չի եղել՝ հիմնավոր պատճառի բացակայությունը դեռեւս ոչինչ չի նշանակում: Չնայած այն հանդիսանում է շատ կարեւոր գործոն՝ այլ համապատասխան նկատառումների հետ մեկտեղ ընդհանուր հավասարակշռությունը որոշելու համար, այն, այնուամենայնիվ, մի նկատառում է, որն ինքնին վերջնականորեն չի վկայում քրեական վարույթի արդարացիության բացակայության մասին (տե՛ս *Սեթոնի* գործը՝ վերեւում հիշատակված, §62):

*ii) Արդյոք չներկայացած վկայի ցուցմունքը եղել է «միակն ու վճռորոշը»*

50. *Ալ-Քավայայի եւ Թահերիի* գործում կիրառված չափանիշի երկրորդ փուլը գնահատում է, թե արդյոք չներկայացած այն վկայի կողմից տրված ցուցմունքները, ում ցուցմունքները ճանաչվել են որպես ապացույց, եղել են մեղադրյալի դատապարտման միակ ու վճռորոշ հիմքը: Կառավարությունը պնդել է, որ չներկայացած վկաներ Ս.Թ.-ի եւ Հ.Օ.-ի ցուցմունքները չեն եղել միակն ու վճռորոշը դիմումատուի դատապարտման համար, մինչդեռ դիմումատուն պնդել է, որ նրանց ցուցմունքները միակն էին, որ ապացուցում էին, որ նրանց հարստացված ուրան վաճառողը հենց ինքն է եղել:

51. Դատարանն այս առնչությամբ նշում է, որ Մարզային դատարանի վճիռը, որը Վերաքննիչ քրեական դատարանը հետագայում լիովին անփոփոխ է թողել, բացի Ս.Թ.-ի եւ Հ.Օ.-ի ցուցմունքներից նաեւ հղում է կատարել այլ ապացույցների: Մարզային դատարանը նաեւ որպես հիմք է ընդունել վկաներ Գ.Դ.-ի եւ Ք.Օ.-ի՝ համապատասխանաբար դիմումատուի ընկերոջ եւ Հ.Օ.-ի դստեր ցուցմունքները, Վրաստանում եւ Հայաստանում կատարված դատաբժշկական փորձաքննության արդյունքները, որոնք հաստատում են, որ հայտնաբերված նյութը պարունակել է հարստացված ուրան, դիմումատուի եւ

Հ.Օ.-ի միջեւ կանոնավոր հեռախոսային խոսակցությունները եւ դիմումատուի անձնագրում համապատասխան ելքի եւ մուտքի դրոշմակնիքները, որոնք ապացուցում են, որ նա Մոսկվայից ժամանել է Երեւան 2010 թվականի մարտի 10-ին (տե՛ս վերեւում 20-րդ պարբերությունը):

52. Սակայն Դատարանը գտնում է, որ Ս.Թ.-ի եւ Հ.Օ.-ի ցուցմունքները էականորեն վերաբերելի են գործին: Այս ցուցմունքների հիման վրա ներպետական դատարանները պետք է որոշեին, թե արդյոք դիմումատուն է Ս.Թ.-ին եւ Հ.Օ.-ին հարստացված ուրան վաճառել: Չնայած այս ցուցմունքը գործի միակ ապացույցը չէր, սակայն այն միակն էր կամ առնվազն վճռորոշն այնքանով, որքանով դա վերաբերում էր դիմումատուի ներգրավվածությանը: Ավելին, այդ ապացույցների մասով Մարզային դատարանը պարտավոր էր մեղադրյալին իր պաշտպանությունը պատշաճ կերպով կազմակերպելու եւ իր բոլոր համապատասխան փաստարկները ներկայացնելու հնարավորություն ընձեռել: Փոխարենը դատարանն իր եզրակացություններում հիմնվել է վկաների այն ցուցմունքների վրա, որոնք երբեւէ չեն ստուգվել (տե՛ս a contrario (հակառակը), *Քաշլեվն ընդդեմ Էստոնիայի* [*Kashlev v. Estonia*], թիվ 22574/08, § 47, 2016 թվականի ապրիլի 26): Նման հանգամանքներում Մարզային դատարանի կողմից Ս.Թ.-ի եւ Հ.Օ.-ին, որոնք ցուցմունքները հետագայում օգտագործվել են դիմումատուի դեմ, անձամբ չլսելը կարող էր էականորեն ազդել դիմումատուի պաշտպանության իրավունքների վրա:

*iii) Արդյոք եղել են բավարար հակակշռող գործոններ*

53. Դատարանը կրկին նշում է, որ այն պետք է բավարար հակակշռող գործոնների առկայությունն ուսումնասիրի ոչ միայն այն գործերում, որոնց դեպքում չներկայացած վկայի ցուցմունքը միակ կամ վճռորոշ հիմքն է եղել դիմումատուին դատապարտելու համար, այլ նաեւ այն գործերում, որոնց դեպքում այն չի կարողացել հստակ պարզել՝ արդյոք տվյալ ցուցմունքը միակն ու վճռորոշն է

եղել, սակայն, այնուհանդերձ, համոզվել է, որ այդ ցուցմունքը կարեւոր նշանակություն է ունեցել, եւ այն որպես ապացույց ճանաչելը, հնարավոր է, սահմանափակել է պաշտպանության կողմի հնարավորությունները (տե՛ս *Շաչաշվիլիի* գործը՝ վերեւում հիշատակված, § 116, եւ *Սեթոնի* գործը՝ վերեւում հիշատակված, § 59): *Շաչաշվիլիի* գործում Մեծ Պալատը որոշել է, որ սույն համատեքստում վերաբերելի են հետեւյալ տարրերը. առաջին ատյանի դատարանի մոտեցումը չստուգված ապացույցների վերաբերյալ, մեղավորությունը հաստատող լրացուցիչ ապացույցների առկայությունը եւ ուժը, ինչպես նաեւ դատական քննության ժամանակ վկաներին խաչաձեւ հարցաքննելու հնարավորության բացակայությունը փոխհատուցելու համար ձեռնարկված դատավարական միջոցները (տե՛ս *Շաչաշվիլիի* գործը՝ վերեւում հիշատակված, § 145 եւ *Պահչի* գործը՝ վերեւում հիշատակված, § 38):

54. Դատարանը նշում է, որ առկա էին որոշակի դատավարական երաշխիքներ պաշտպանության կողմի սահմանափակումները փոխհատուցելու համար, ինչպես, օրինակ, Ս.Թ.-ի եւ Հ.Օ.-ի կողմից տրված ցուցմունքների ընդունելիությունը վիճարկելու հնարավորությունը: Սակայն Դատարանի կարծիքով դրանք բավարար չէին փոխհատուցելու այն փաստի համար, որ դիմումատուն քննության փուլում նույնիսկ չի ունեցել վկաների ցուցմունքները վիճարկելու հնարավորություն: Այս վկաների նկատմամբ քրեական հետապնդում էր իրականացվել, եւ նրանց դատապարտել էին Վրաստանում, մինչդեռ դիմումատուն, ով մեղադրվում էր նրանց օժանդակելու մեջ, ձերբակալվել էր, եւ նրա հանդեպ քրեական հետապնդում էր իրականացվել Հայաստանում: Ամեն դեպքում, բոլոր ապացույցները պետք է ստուգվեին դատարաններում: Ավելին, Մարզային դատարանի վճռում ոչինչ չի մատնանշում, որ այն առանձնահատուկ զգուշավորություն է դրսեւորել չստուգված ապացույցների նկատմամբ, կամ որ այն ավելի քիչ նշանակություն է տվել նման ցուցմունքներին (համեմատի՛ր, օրինակ, *Ալ-Քավայայի եւ Թահերիի* գործը՝ վերեւում հիշատակված, § 157 եւ *Պահչի* գործը՝ վերեւում հիշատակված, § 43):

*iv) Եզրակացություն*

55. Վերոհիշյալ նկատառումները բավարար են թույլ տալու համար Դատարանին եզրակացնել, որ տվյալ գործում դիմումատուի՝ արդար դատաքննության իրավունքը խախտվել է:

56. Ուստի տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի եւ 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում:

## II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

57. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

> «Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել:»:

### Ա. Վնասը

58. Դիմումատուն պահանջել է 90 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

59. Կառավարությունը համարել է, որ պահանջված գումարը չափազանց մեծ է եւ չարդարացված: Նրանք պնդել են, որ գնահատումը պետք է իրականացվի արդարության սկզբունքի հիման վրա եւ Դատարանի նախադեպային իրավունքին համապատասխան:

60. Դատարանը դիմումատուին շնորհում է 2 400 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

### Բ. Ծախսերը եւ ծախքերը

61. Դիմումատուն նաեւ պահանջել է 9 200 եվրո՝ որպես հատուցում Դատարանում կրած ծախսերի եւ ծախքերի համար: Այս առնչությամբ նա ներկայացրել է փաստաբանի պայմանագիրը:

62. Կառավարությունը պնդում է, որ դիմումատուն չի ներկայացրել մանրամասն տեղեկատվություն ծախսերի եւ ծախքերի, մասնավորապես՝ աշխատած ժամերի եւ կիրառված ժամային դրույքաչափի վերաբերյալ: Առկա չէին նաեւ փաստաթղթավորված ապացույցներ ծախսերն ու ծախքերը, այդ թվում՝ թարգմանչական ծառայությունների հետ կապված ծախսերն իրականում կատարված եւ վճարված լինելու մասին: Ամեն դեպքում, պահանջված գումարն արդարացված չէր եւ չափազանց մեծ էր:

63. Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դիմումատուն ունի ծախսերի ու ծախքերի հատուցման իրավունք այնքանով, որքանով ապացուցվել է, որ դրանք իրականում կատարվել են, անհրաժեշտ են եղել, եւ որ դրանց չափը եղել է ողջամիտ: Սույն գործում դիմումատուն միայն ներկայացրել է փաստաբանի պայմանագիրը: Նման բնույթի համաձայնագրերը, որոնք պարտավորություններ են առաջացնում միայն փաստաբանի եւ վստահորդի միջեւ, չեն կարող պարտադիր ուժ ունենալ Դատարանի համար: Այնուամենայնիվ, հաշվի առնելով իր տնօրինության տակ գտնվող խնդիրն ու այն փաստը, որ փաստաբանն ակնհայտորեն ներկայացրել է դիմումատուին Դատարանի վարույթներում, Դատարանը ողջամիտ է համարում դիմումատուին շնորհել 1 000 եվրո գումար՝ որպես կրած ծախսերի ու ծախքերի հատուցում:

### Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

64. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի

սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ՝

1. *Հայտարարում է* գանգատն ընդունելի.

2. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի եւ 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում.

3. *Վճռում է, որ*՝

ա) պատասխանող պետությունը վճիռը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան վերջնական դառնալու օրվանից երեք ամսվա ընթացքում պետք է դիմումատուին վճարի հետեւյալ գումարները, որոնք պետք է փոխարկվեն պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով.

i) ոչ նյութական վնասի դիմաց՝ 2 400 եվրո (երկու հազար չորս հարյուր եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ,

ii) ծախսերի եւ ծախքերի դիմաց՝ 1 000 եվրո (հազար եվրո)՝ գումարած դիմումատուից գանձման ենթակա ցանկացած հարկ.

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարի նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

4. *Մերժում է* դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2018 թվականի սեպտեմբերի 6-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

| | |
|---|---|
| Ռենատա Դեգեներ | Լինոս-Ալեքսանդր Սիցիլիանոս |
| Քարտուղարի տեղակալ | Նախագահ |